ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶ
ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔ

ք. Վեդի ***17 սեպտեմբերի 2025թ.***

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԼՍՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

2025 թվականի սեպտեմբերի 17-ին, ժամը 15:00-ին Վեդու համայնքապետարանի նիստերի դահլիճում (ք. Վեդի, Թումանյան 6), տեղի ունեցավ ՀՀ Արարատի մարզի Վեդի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու վերաբերյալ հանրային լսումներ:

Հանրային լսմանը մասնակցում էին Վեդի համայնքի համայնքային ենթակայության կազմակերպությունների ներկայացուցիչներ, ինչպես նաև համայնքի բնակիչներ, համայնքապետարանի աշխատակիցներ:

Հրավիրված հանրային լսումները վարում էր աշխատակազմի քարտուղար՝ Հ.Ստեփանյանը

Հանրային լսումների ընթացքն արձանագրում էր աշխատակազմի Կրթության, մշակույթի, սպորտի, երիտասարդության և առողջապահության բաժնի առաջատար մասնագետ՝ Հ.Գրիգորյանը

1.Հանրային լսման օրակարգի թեման էր՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱՐԱՏԻ ՄԱՐԶԻ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026-2028 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ ՄԻՋՆԱԺԱՄԿԵՏ ԾԱԽՍԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ՎԵԴԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ

Համայնքի ղեկավարի կողմից առաջարկված Վեդի համայնքի 2026-2028 թվականների միջնաժամկետ ծախսային ծրագիրը հաստատելու մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ ելույթով հանդես եկավ աշխատակազմի քարտուղար Հրաչյա Ստեփանյանը, ով ողջունելով հանրային լսման մասնակիցներին կարևորեց հանրային լսումների միջոցով համայնքի բնակիչների մասնակցությունը տեղական ինքնակառավարմանը ապահովելու անհրաժեշտությունը և նշեց, հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը Վեդի համայնքի ավագանու 29.06.2024 թվականի N 69-Ա որոշմամբ սահմանված կարգով 15 օր առաջ նախապես հրապարակվել է Վեդու համայնքապետարանի պաշտոնական՝ www.vedicity.am կայքում, սահմանված կարգով հանրային լսման վերաբերյալ հայտարարությունը առաքվել է համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի վարչական ղեկավարներին՝ տեղերում բնակչության շրջանում համապատասխան իրազեկում ապահովելու համար: Հայտնեց, որ հանրային քննարկումների ընթացքում ֆիզիկական և իրավաբանական անձինք հնարավորություն են ունեցել հանրային քննարկման առարկայի վերաբերյալ իրենց առաջարկություններն ու դիտողությունները ներկայացնել մինչև 2025 թվականի սեպտեմբերի 12-ը, վերջիններս ուղարկելով հանրային ծանուցման մեջ նշված էլ.հասցեով, ինչպես կարող էին ներկայացնել համայնքապետարանի աշխատակազմ նույն ժամկետում, սակայն նշված ժամկետում շահագրգիռ

հանրության կողմից համապատասխան դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Շարունակելով իր խոսքը, պարոն Ստեփանյանը հանրային լսման դրված հարցի ներկայացման համար խոսքը փոխանցեց աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ Անդրանիկ Ավետիսյանին, ով հայտնեց, որ Վեդի համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Վեդի համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Վեդի համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները,ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Վեդի համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Վեդի համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

Ա.Ավետիսյանը նշեց, որ Վեդի համայնքի 2026-2028թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը լինելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների և քննարկումների միջոցով:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
9. Բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրների լուծումը:
10. Նախադպրոցական հաստատություններիմատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
11. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը և նոր նախադպրոցական հաստատությունների կառուցումը:
12. Վեդի համայքնում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
13. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում,մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
14. Համայնքի միջբնակավայրերի և ներբնակավայրերի ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:

հանրության կողմից համապատասխան դիտողություններ և առաջարկություններ չեն ներկայացվել:

Շարունակելով իր խոսքը, պարոն Ստեփանյանը հանրային լսման դրված հարցի ներկայացման համար խոսքը փոխանցեց աշխատակազմի Ֆինանսատնտեսագիտական և գնումների բաժնի պետ Անդրանիկ Ավետիսյանին, ով հայտնեց, որ Վեդի համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը (այսուհետ՝ ՄԺԾԾ) հանդիսանում է Վեդի համայնքի զարգացման հեռանկարի թվային արտացոլումը և համայնքի միջնաժամկետ կտրվածքով գլխավոր ֆինանսական փաստաթուղթը, որը և հանդիսանում է ելակետ՝ նախագծելու համապատասխան տարվան հաջորդող տարեկան բյուջեն:

ՄԺԾԾ-ով ներկայացվում է կանխատեսվող Վեդի համայնքի հաջորդող 3 տարիների եկամուտները,ծախսային ուղղությունները ըստ ոլորտների, որոնք բերելու են Վեդի համայնքի կայուն և համաչափ զարգացմանը, ինչպես նաև կընձեռնեն համայնքին առավել արդյունավետ գեներացնել եկամուտները, մասնավորապես միջնաժամկետ կտրվածքով կմշակվեն մեխանիզմներ դրանք ավելացնելու ուղղությամբ, որը իր հերթին կբերի համայնքի զարգացմանը միտված ծախսերի ավելացմանը:

ՄԺԾԾ-ն կնպաստի ավելի լայն և հեռանկարային ծախսերի քաղաքականության մշակմանը, որի շնորհիվ համայնքի զարգացման հեռանկարը կստանա բյուջետային ձևաչափ և որը ըստ էության հասանելի կդարձնի բոլորին՝ այդ թվում քաղաքացիներին, ուսումնասիրելու միջնաժամկետ կտրվածքով համայնքի կողմից նախատեսվող ծախսերի բաշխումը ըստ ոլորտների՝ թվային տեսքով, ընդ որում սույն ֆինանսական փաստաթղթով առավել կընդգծվի բյուջետային ծրագրերի շարունակականության ապահովման ֆինանսական մեխանիզմները:

Վեդի համայնքի 2026-2028թթ. միջնաժամկետ ծախսերի ծրագիրը նախագծվել է ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» օրենքով:

Ա.Ավետիսյանը նշեց, որ Վեդի համայնքի 2026-2028թթ. համար նախանշված ծրագրերի իրականացումը լինելու է համաչափ և կայուն զարգացման սկզբունքի վրա, որի նպատակային իրագործման համար առաջնահերթ և գերակա են համարվելու՝

1. Կառավարման արդյունավետության բարձրացումը, համայնքապետարանի գործունեության թափանցիկությունը և բնակչությանը լիարժեք հաշվետու լինելը:
2. Հանրային տարածքների, շրջակա միջավայրի և պատմամշակութային ժառանգության պաշտպանությունը:
3. Մարդու իրավունքների պաշտպանության գերակա սկզբունքներով որոշումների կայացումը:
4. Համայնքի մասնակցային կառավարման մշակույթի ձևավորումը՝ բնակչությանը մասնակից դարձնելով հանրային նշանակություն ունեցող և բնակչությանը հուզող որոշումների կայացմանը՝ հարցումների և քննարկումների միջոցով:
5. Իրավահավասար ու ներդաշնակ համակեցության մշակույթի ձևավորումը:
6. Անվտանգ, առողջ և հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայրի ստեղծումը:
7. Երիտասարդական և սպորտային ծրագրերի միջոցով բնակիչների շրջանում առողջ ապրելակերպի գաղափարի խթանումը:
8. Զբոսաշրջության ենթակառուցվածքների զարգացման խթանումը և համայնքի զբոսաշրջային միջավայրի բարելավումը:
9. Բազմաբնակարան շենքերի հիմնախնդիրների լուծումը:
10. Նախադպրոցական հաստատություններիմատչելիության և ներառականության հնարավորությունների ապահովումը:
11. Նախադպրոցական և արտադպրոցական կազմակերպությունների հիմնանորոգումը և նոր նախադպրոցական հաստատությունների կառուցումը:
12. Վեդի համայքնում կրթական համակարգի որակի բարելավմանն ուղղված միջոցառումների իրականացումը:
13. Մշակույթի ոլորտի ենթակառուցվածքների զարգացում,մշակութային ծառայություններից օգտվելու ներառականության ապահովումը:
14. Համայնքի միջբնակավայրերի և ներբնակավայրերի ճանապարհների ճանապարհաշինարարական լայնածավալ ծրագրերի շարունակականության ապահովումը:

15. Փողոցային լուսավորության համակարգի արդիականացումը, էներգախնայող համակարգերի ներդրումը, համակարգի անվտանգության և հուսալիության աստիճանի բարձրացումը:
16. Շենքերի և բակային տարածքների բարեկարգումն ու բնակչության անվտանգ տեղաշարժի ապահովումը:
17. Բնակելի ֆոնդի վերանորոգումն և պահպանումը, հարթ և թեք տանիքների, ջրամատակարարման և ջրահեռացման ներքին ցանցի, վթարային պատշգամբների վերանորոգման շարունակականության ապահովումը:
18. Հանգստի գոտիների ստեղծումը, կանաչապատման աշխատանքների իրականացումը:
19. Նախակրթական, կրթական, մշակութային և սպորտային օբյեկտների հիմնանորոգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
20. Բնակիչների սոցիալական պաշտպանվածության ապահովումն ու այդ նպատակով հաշմանդամություն ունեցող անձանց, ծնողազուրկ երեխաների, բազմազավակ և անապահով ընտանիքների կենսական ապահովմանն ուղղված սոցիալական ծրագրերի արդյունավետ իրականացումը:
21. Ոռոգման ցանցերի, ինտենսիվ այգիների, կարկտապաշտպան համակարգերի ներդրման, կառուցման, վերանորոգման և բարեկարգման աշխատանքների շարունակականության ապահովումը:
22. Սոցիալ-տնտեսական իրավիճակի վերլուծության և առկա հիմնախնդիրների բացահայտման, ֆինանսական, տնտեսական, բնական և մարդկային ռեսուրսների գնահատման ծրագրերի արդյունավետ իրականացումը:

Ա.Ավետիսյանը իր զեկույցի ընթացքում անդրադարձավ Վեդի համայնքի 2026-2028թթ. կանխատեսվող եկամուտներին՝ նշելով, որ դրանք կանխատեսվում են համապատասխանաբար՝ **4.174.661.100, 4.408.541.100** և **4.645.771.100** դրամ: Հավելեց, որ եկամուտների կազմում աճ է նախատեսվում գրեթե բոլոր բյուջետային բաժիններում և խմբերում, մասնավորապես հարկ է նկատել Վեդի համայնքի սեփական եկամուտների դինամիկան, որը հիմնականում պայմանավորված է ՀՀ Հարկային օրենսգրքի 233-րդ հոդվածի 7-րդ մասով սահմանված դրույթների կիրառմամբ:

Ա.Ավետիսյանը նշեց, որ 2026-2028թթ. ՄԺԾԾ-ով սեփական եկամուտների կազմում էապես աճող եկամտատեսակներն են՝

1. Գույքահարկ անշարժ գույքի մասով համապատասխանաբար՝ 234000,0 235000.0 և 237000.0 հազ. դրամ
2. Գույքահարկ փոխադրամիջոցների մասով՝ 345800.0, 347500.0 և 350000.0 հազ. դրամ
3. Տեղական տուրքեր՝ 22720.0, 24300.0 և 25830.0 հազ. դրամ
4. Պետական տուրքեր՝ 13500.0, 14500.0, և 15000.0 հազ. դրամ
5. Վարչական գանձումներ և այլ եկամուտներ՝ 277898.0, 289498.0 և 295198,0հազ. դրամ, այդ թվում աղբահանության՝ գծով վճարը՝ 58000.0,հազ. դրամ, 60000.0,հազ. դրամ, 62000.0,հազ. դրամ

Պետության կողմից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրվող դոտացիաները նախնական կանխատեսմամբ նախատեսվել են համապատասխանաբար 2258000,0հազ.դրամ, 2525000,0հազ. դրամ և 2800000,0 հազ. դրամ :

Պետության կողմից հատկացվող այլ դոտացիաները և նպատակային հատկացումները նախատեսվել են համապատասխանաբար 22743.1հազ.դրամ, 22743,1հազ. դրամ և 22743,1 հազ. դրամ:

Պետության կողմից սուբվեցիոն ծրագրերի իրականացման նպատակով հատկացվող սուբվենցիաների մասով կանխատեսումներ չկան, քանի որ դրանք կարող են նախատեսվել միայն ծրագրերի համապատասխան մարմինների կողմից հավանություն ստանալուց և հաստատվելուց հետո:

Այնուհետև անդրադարձավ Վեդի համայնքի 2026-2028թթ. ծախսերին, նշելով, որ կանխատեսվում են համապատասխանաբար՝ **4.174.661.100, 4.408.541.100** և **4.645.771.100** դրամ և միտված են համայնքի համաչափ և կայուն զարգացմանը: Ծախսերի քաղաքականության և նպատակներին հասնելու սկզբնաղբյուրն է հանդիսանում լուծել համայնքի առջև դրված կայուն զարգացման պահանջը՝ մշակելով և կատարելով դրա իրագործմանն ուղղված բյուջետային ծրագրերը: Ծախսային մասը նախագծվել է հետևելով բյուջետային հաշվեկշռվածության սկզբունքին՝ ապահովելով բյուջեների կառուցման ստանդարտները և ներկայացնելով այն ըստ գործառական և տնտեսագիտական

դասակարգումների, ինչպես նաև ըստ առանձին ծրագրերի: Հրապարակեց վարչական և ֆոնդային մասի ծախսերը, նշեց, որ վերոնշյալ ծրագրերի իրականացման համար Ֆոնդային բյուջեով նախատեսված ընդհանուր գումարները կազմում են 1500000.0 հազար դրամ, 1650000.0 հազար դրամ, 1800000.0 հազար դրամ:

Հանրային լսումն անցկացվեց հարց ու պատասխանի միջոցով:

Աշխատակազմի Գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի պետ Շ.Բաքոյանը առաջարկեց վերանայել ճանապարհների հարթեցման և փոսային նորոգումների, ինչպես նաև շների դեմ պայքարի համար նախատեսված ֆինանսական հատկացումների չափը, հայտելով, որ ներկայումս պլանավորված ֆինանսական միջոցները բավարար չեն նշված աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար:

Ամփոփելով հանրային լսումը, աշխատակազմի քարտուղարը շնորհակալություն հայտնեց հանրային լսման մասնակիցներին և հորդորեց այսուհետ ակտիվ մասնակցություն ցուցաբերել նման հանրային միջոցառումների մասնակցությանը:

Աշխատակազմի քարտուղար՝ **Հ.Ստեփանյան**

Արձանագրող՝

ԿՄՍԵ և Ա բաժնի առաջատար մասնագետ՝ **Հ.Գրիգորյան**

Վեդի համայնքի 2026-2028թթ-ի միջնաժամկետ ծախսային ծրագրի հաստատման մասին համայնքի ավագանու որոշման նախագծի վերաբերյալ 17.09.2025թ. տեղի ունեցած հանրային քննարկումների մասնակիցների ցուցակ

ք.Վեդի 17.09.2025թ.

h/h	Անուն, Ազգանուն	Զբաղեցրած պաշտոնը	Ստորագրություն
1.	Հրաչյա Պետրոսյան	Գլխ. մասնագետ	
2.	Յուրիկ Մելքումյան	Կարգ. գործ. բաժնի պետ	
3.	Ռոմեն Հովսեփյան	բաժնի պետ	
4.	Գևորգ Ծատուրյան	գլխավոր մասնագետ	
5.	Էմմա Բաղդասարյան	Ցանց. և Բնակտ. բաժնի պետ	
6.	Արմեն Սարգսյան	Ջրամատ. բաժնի պետ	
7.	Անանուն Գրիգորյան	գլխավոր գնահատող	
8.	Անահիտ Մելքոնյան	ավագ մասնագետ	
9.	Գարիկ Մելքումյան	Բնակիչ Հայաստան	
10.	Հմայակ Սարգսյան	Գլխ. գլխ. մասն. ավագ. աստ.	
11.	Վարդ Համբարձումյան	Գլխ. ստուգիչ գլխավ. մասնագ.	
12.	Տիգրան Գրիգորյան	Կոնցերտի Կազմակերպող	
13.	Հենրիկ Ղազարյան	գլխավոր գործ.	
14.	Գերտրուդ Զոհրաբյան	ԱՊԱՏ-ի գլխ. ստուգ. մասն.	
15.	Անդրանիկ Մելքումյան	Ֆերմ. և գիտական բաժնի պետ	
16.	Գրիգոր Հովսեփ	գլխ. ճարտ. մասնագետ	
17.	Անուշ Սարգսյան	գլխ. գլխավոր մասնագետ	
18.	Գևորգ Գրիգորյան	ավագ ուսուցիչ	
19.	Գեղամ Մելքումյան	տեղեկատու տնօրեն	
20.	Նարեկ Գևորգյան	համակարգչի շահագործող	
21.			
22.			